ԽՐԱՄՈՒՂՈՒ Տ-ՁԵՎ ԽԱՉՄԵՐՈՒԿԻ ՄԱՔՐՈՒՄԸ
«ԽԱՉԻ» ՄԵԹՈԴՈՎ

Հակառակորդի խրամուղում գտնվող Տ-ձև խաչմերուկը հարձակման ամենավտանգավոր տարածքներից մեկն է: Հակառակորդին կարելի է սպասել ցանկացած կողմից, բայց մտածելու ժամանակ չկա: Մարտական գործողությունների փորձը խիստ ճշգրտումներ է մտցրել մարտավարության մեջ: Այժմ հաշվի են առնվում աղվեսի որջերը, առձգիչների առկայությունը, զենքի կեղտոտվածությունը և երկնքից մշտական սպառնանքը:

Քայլ առ քայլ հրահանգներ գրոհային զույգի համար (մարտիկ թիվ 1 առաջատար, մարտիկ թիվ 2 հաջորդող):

Հիմնական կանոնները խրամուղի մտնելուց առաջ:

Դրոնների գործոնը: Խրամուղիները այլևս անվտանգ չեն վերևից: FPV-ն և օդային վարնետման համակարգերն անընդհատ որսում են գրոհայիններին: Մինչ զույգը աշխատում է խաչմերուկում, շրջափակ մարտիկը պետք է հսկի երկինքը: Մի կանգնեք բաց տարածքներում՝ աշխատեք ծածկերի, տանիքների տակ կամ հնարավորինս արագ: Ձեր վերևում սավառնող հակառակորդի ԱԹՍ-ները

ռադիոկապի միջոցով անմիջապես կտեղեկացնեն ձեր դիրքը անկյունում գտնվող հակառակորդին:

Կույր հետախուզությունը մահ է: Կամ ձեզ ուղղորդում է յուրային դրոնը, կամ դուք ունեք հատուկ սարք՝ շրջադարձերը դիտելու համար: Դուք պետք է իմանաք խաչմերուկի երկրաչափությունը մինչև մեկ քայլ առաջ: Երբեք մի մտեք խրամուղի կիսադատարկ պահեստատուփով: Նախքան վերջնական նետում կատարելը, զույգը պարտավոր է ազատվել կիսատ պահեստատուփերից՝ փոխարինելով նորերով: Անկյունը մաքրելու համար դուք պետք է ունենաք լրիվ ՄԼ: Զենքը սեղմված է մարմնին, արմունկները ծալված: Թյունինգ արված զենքերը (երկար բանկաներ/խլացուցիչներ) անկյուններից չհանել՝ հակառակորդը կնկատի և անհապաղ միջոցներ կձեռնարկի: Ձեզ հետ ունեցեք առավելագույն քանակի նռնակներ:

Քայլ 1. Կրակի ճնշումը և ականազերծումը նռնակով:

Խաչմերուկից 2-3 մետր առաջ հարձակողական նռնակներ նետեք տարածքի խորքը: Նշանառեք այնպես, որ պայթյունի ալիքը և բեկորները ոչ միայն վիրավորեն/խլացնեն հակառակորդին, այլև խափանեն հավանական առձգիչների առկայությունը, որը հակառակորդը հաճախ տեղադրում է անկյուններում նահանջի ժամանակ: Պայթյունից անմիջապես հետո նետվեք առաջ:

Քայլ 2. Ելք և հարկաշաքերի բաժանում:

Մարտիկները անկյունին մոտենում են սինխրոն: Որպեսզի զույգի համար «հերթ չառաջանա» և նեղ հատվածում յուրայինի կրակից չվնասվեք, աշխատեք երկու հարկաշաքով: թիվ 1 մարտիկը (առաջատարը) քայլում է խորը ծնկածալած (ստորին հարկաշարք): Թիվ 2 մարտիկը (հաջորդողը) շաժվում է առաջինի վրայով կռացած (վերին հարկաշարք):

Քայլ 3. «Խաչ» մանները (անկյունները կտրելը):

Խաչմերուկի գիծը հատելու պահին մարտիկները կտրուկ խաչաձև շարժում են կատարում՝ կոտրելով հետագիծը: Թիվ 1 մարտիկը անկյունագծով ընկնում է հակառակ անկյունը (օրինակ՝ գնում է դեպի աջ ճյուղավորում) ՝ անմիջապես ուղելով իր զենքի փողը դեպի անցուղու խորքը: Թիվ 2 մարտիկը միաժամանակ շարժվում է ձախ ճյուղավորում:

Կարևոր է. համոզվել, որ վերահսկում եք առջևի պատը (ուղիղ առջևում), այնտեղ հաճախ գտնվում են աղվեսի որջերը, խորշերը, որտեղ կարող է նստած լինել հակառակորդը: Ստուգեք առձգիչներ լարերի և MOH-50 տիպի ականների առկայությունը:

Քայլ 4. Ֆիքսեք հատվածները և սկսեք համատարած գնդակոծումը:

Յուրաքանչյուրը մեջքով սեղմվում է իր մոտ գտնվող (մաններից հետո ամենամոտ) խրամուղու պատին: Թիվ 1 մարտիկը ամուր պահում է աջ հատվածը, թիվ 2 մարտիկը՝ ձախը: Պատերի երկայնքով անմիջապես համատարած կրակ է բացվում՝ պոտենցիալ կետերը ճնշելու համար, նույնիսկ եթե հակառակորդը անմիջապես տեսանելի չէ: Մթության մեջ միաժամանակ միացվում են ենթափողային լուսատու լապտերը՝ հակառակորդին կուրացնելու համար:

Քայլ 5. Զեկույց և ռեզերվի ներանցում:

ՌԷՊ-ի աշխատանքը և մարտի աղմուկը կխլացնի ռադիոհաղորդումները այնպես որ զույգը պետք է աշխատի շոշափողական նշաններով (հրում ուսին-գնաց), իսկ խրամուղի ներթափանցելուց հետո միայն կարճ բարձր հրամաններ ձայնով. «Մաքուր է», «Կոնտակտ»: Միայն անկյունները ֆիքսելուց հետո թիվ 3 և թիվ 4 մարտիկները մտնում են խաչմերուկ՝ հաջողություն զարգացնելու համար:

Ի՞նչ անել, եթե ամեն ինչ ըստ պլանի չի ընթանում:

Խրամուղիներում ավազի և մուրի պատճառով զենքերը հաճախ խափանվում են՝ կրակոցը ընդհատվում է / լռվում է գնդացիրը: Եթե Թիվ 1 մարտիկի գնդացիրը լռվում է խրամուղուն մտնելիս, նա գոռում է. «Խափանում» և պարկում է խրամուղու հատակին՝ հպվելով պատին: Թիվ 2 մարտիկը պահում է խրամուղու առավել վտանգավոր հատվածը, մինչև երկրորդը վերացնում է խափանումը:

Եթե առաջին մարտիկին խոցել են մուտքի մոտ, երկրորդը՝ չի կանգնում օգնություն ցուցաբերելու համար: Նա պետք է ճնշի հակառակորդի կրակակետը, հակառակ դեպքում ամբողջ խումբը կկործանվի: Տարհանումը հնարավոր է միայն աջակցող խմբի միջոցով և կրակի պաշտպանության ներքո: Մի՛ սառեք խաչմերուկում: Խաչմերուկում ցանկացած դադար հավասար է 100 տոկոսանոց վախճանի: Միայն դինամիկա, ճնշում, սինխրոն գործողություն և երկնքի վերահսկում:

Աղբյուրը. https://vk.com/wall-89274352_21056?ysclid=mrddgkyd7e145090865